

145. ԾԻՏՈՒՑ ԱՄՉԸՅՈՂ ԿՆԻԿ

Մարդ ու կնիկ նստուկ են տուն, մարդն ինչոր բան իլնևր, կնիկ լե զգլուխ բացեր՝ կը սանտրեր, նադե՛ան ճետ ներս կը մտնա. կնիկ շուտ մե զլաչին կը թալե վըր գլխուն կը ծածկե:

— Կնիկ, — կըսե մարդ, — խեր էզնի, ճետն օր ներս մտավ՝ զգլուխդ յորի՞ն ծածկեցիր:

— Քա՛ վո՛ւշ, սևով շէզներ, չէ՞ ճետ լե տղամարդ է, տղա-մարդու յառջև կնիկ զուր գլուխ իմա՞լ չը ծածկե:

Սարդըն չընկավ մըջ մտքին. «Իմ կնկա տակ բան մե կա, հավատ թըղ չըպնդե»:

Օղորդ օր, մարդ գիշեր ցերեկ դողխուլաղ էղավ, գողտուկ կնկա քեռեքն չընկավ, հարի զփրուզեն հանեց էրևան: Ճիտուց ամչըցող կնիկն՝ հըտ ուրիշին սիրողութեն կէներ:

